

ստացած դրամներն կէս կտրել՝ ստուգելու համար որ արծաթապատ պղինձ չէ: Անոնք այնքան շատ նախանձոտ են, որ անդամ մը Գիւլանի նահանգապետը հրաման մը հրատարակեց, որուն ով որ մերժէ որեւէ դրամ, բացի յայտնի կերպով կեղծերէն, անոր քիթն ու ականջը պիտի կտրուի եւ իր ինչքը պիտի գրաւուի: Սակայն, ես երբեք չիմացայ այս հրամանին գործադրուած ըլլալը:

Շերամը, ինչպէս որ քաջ ծանօթ է, կը ծնի հակիրթէ մը, որ զնգասեղի մը զլիւնէն աւելի մեծ չէ: Մարտ ամսուն մէջ, երբ արեւը արդէն շատ տաք է, ես ակնատես եղայ Գիւլանի զիւղացիներուն այս հակիրթներուն կեանք տալու պատրաստուելնուն: Հակիրթները պահուած էին ձմեռուայ ընթացքին, մեծ մասամբ իրենց անձին վրայ, մարմնոյն ամենաշերտ տեղը, մասնաւորաբար իրենց անութներուն տակ: Տասը կամ աւելի՝ օրուան մէջ, ստացուած տաքութեան համաձայն, որդ մը կը գոյանայ ու կը սկսի սնանիլ: Թիթենիի ծառատունկերը, որոնք ամէն տարի կը յօդուին, իրենց սնունդին համաձայն մատղաշ եւ յարմար տերեւներ կուտան: Մօտաւորապէս քառասուն օրուայ մէջ որդը իր հասունութեան կը հասնի, եւ օրական ինքզինքը կը փաթաթէ մետաքսի խողակի մը մէջ, որ աղանձի մը հակիրթին մեծութիւնը կը ստանայ: Երբ այս հակիրթը ամբողջութեամբ կը շինուի, որ ընդհանրապէս ներփակեալ որդին լուծենէն կը գիտցուի, խողակները ծածկոցները ծակելով՝ հեղձամուղձ կ'ընեն որդը, արեւի ջերմութեամբ կը սպաննեն: Բացի այն պարագայէն, երբ կ'ուզեն անմիջապէս քակել մետաքսը խողակէն: Այն ատեն տաք ջուրը կը ծառայէ նոյն նպատակին: Սակայն, անոնցմէ ոմանց թոյլ կը տրուի ապրիլ եւ խողակը ծակել, որովհետեւ իր բանտը կտրելէ վերջ թիթեռնիկը խողակէն մետաքս քակել կարելի չէ, ինչպէս որ կարելի է չճակուածէն: Սակայն, ծեծուելով պատրաստուելէ վերջ կարելի է բամպակի նրման մանել: Այս մետաքսը մենք կ'անուանենք Քէճ (Kedge), որուն մնացորդները կամ աւելցուցները այնքան վատ են, որ միայն մա-

նարան զրկուելով մետաքս լեցուելիք տեղերուն կը գործածուին:

«Հում մետաքսին մաքրութիւնը եւ պայծառութիւնը կը կազմէ անոր արժէքին մեծ մասը: Ստորին մետաքսը կ'ունենայ բազմաթիւ հանդոյցներ եւ իր թելերուն կ'պած կոշտ նիւթեր: Մետաքսի գլուխը կամ կաթը (կապ, չիլէ), յաճախ լաւ կ'երեւայ աչքի, մինչ շատ կոշտութիւն պահուած կ'ըլլայ անոր մէջ, որովհետեւ Գիւլանի զիւղացոց խարերայութեամբ խողակը քակած ատեննին կը պահեն անոր պակասութիւնները: Լաւագոյն մետաքսները յարատեւ փայլ ունին կամ պայծառութիւն: Սպիտակ կամ արծաթաղոյնը ամենաշատ զնահատուածն է՝ բայց Գիւլանի մէջ մեծագոյն մասը որդէն իսկ զեղին է: Այն սպիտակ մետաքսը, որ արատներ ունի, ստուգուած է որ ընդհանրապէս խոնաւ տեղ պահուած ըլլալուն պատճառաւ է, որ կը վնասէ թէ՛ տեսքին եւ թէ՛ տոկունութեան:

«Մետաքսը պէտք է հաւասար ըլլայ, ուժեղ եւ մետաղաթելի նման կլոր, նաեւ մաքուր: Անոր մեծագոյն մասը չափաւոր նըրութեամբ պէտք է ըլլայ, որովհետեւ նրբագոյնը գործուելու համար ամենադիւրինը ըլլալով, այսինքն՝ որքան որ կարելի է միաչափ հաստութեամբ, եւ ոչ փոխնիփոխ հաստ ու բարակ, շատ հեշտութեամբ փաթաթելով կարելի է բաժնել, հակառակ պարագային հաստը կրնայ բարակը կտրել եւ վատնուծի պատճառ ըլլալ, հիւսուածագործութեան ատեն: (Մետաքսի) երկարութիւնը, որ ընդհանրապէս ամենէն շատ կը զնահատուի, տասնըվեց կամ տասնըութը խողակներու փաթոյթն է: Կաժին չըջարոյրը, երբ վաթսուն ինճեղ է, շատ յարմարութեամբ կը ճախարակուի: Ասկէ աւելի երկարը նախընտրելի չէ, իսկ աւելի կարճը, իր քնական խժով իրար կ'պցուած ըլլալով, ճախարակին արագ դարձարձը կրնայ կտրել: Դարձեալ մէկը կրնայ զիտել, որ մեծ տարբերութիւն կայ սանտրով մաքրուած մետաքսին եւ խողակին վրայ եղածին պէս մետաքսին միջեւ: Առաջինը անփորձ մէկու մը, որ սանտրուելու ծայրերը կամ կտրած թելերը չի նշմա-